ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018 թվականի փետրվարի 27-ից մարտի 1-ը
ՌԴ Մոսկվա գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**

Արմեն Եգանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ճյուղային տնտեսական քաղաքականության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2018 թվականի փետրվարի 27-ից մարտի 1-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը**

Հայաստանի Հանրապետությունում տրամադրվող արդյունաբերական հատուկ սուբսիդիաները «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 28-րդ հավելվածի՝ «Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու միասնական կանոնների մասին» արձանագրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության քննարկում:

Նշված հարցով իրականացրել եմ մի շարք քննարկումներ, որտեղ ԵՏՀ կողմից տրվել են բացատրություններ արդյունաբերական սուբսիդիաներին առնչվող ՀՀ որոշ իրավական ակտերի և հիմնարար փաստաթղթերի իրավաչափության վերաբերյալ՝ առաջարկելով համապատասխանեցնել տրամադրվող սուբսիդիաները Պայմանագրի պահանջներին:

Միևնույն ժամանակ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարության միջև ստորագրված համագործակցության հուշագրով կողմերը պայմանավորվել են ՀՀ և ՌԴ արդյունաբերական ձեռնարկությունների միջև համագործակցության ընդլայնման և խորացման նպատակով ստեղծել համատեղ աշխատանքային խումբ՝ Ճանապարհային քարտեզ մշակելու համար, այդ թվում՝ ՌԴ և ՀՀ արդյունաբերական ձեռնարկությունների միջև կոոպերացիոն նախագծերի իրականացման ապահովման նպատակով:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից մշակվել է Ճանապարհային քարտեզի նախագիծ և այն քննարկվել է ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարության համապատասխան մասնագետների հետ՝ փաստաթղթին վերջնական տեսք տալու նպատակով:

6. **Քննարկված թեմաները**

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովում՝

  Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող արդյունաբերական հատուկ սուբսիդիաները՝ Պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխանության հարցը:

- ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարությունում՝

ՀՀ և ՌԴ արդյունաբերական ձեռնարկությունների միջև համագործակցության ընդլայնման և խորացման նպատակով մշակված «Ճանապարհային քարտեզի» նախագծի քննարկում և համաձայնեցում ռուսական կողմի հետ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

- Ս.թ.փետրվարի 27-28-ին՝

իրականացրել եմ քննարկումներ ԵՏՀ արդյունաբերական քաղաքականության դեպարտամենտի հետ Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող սուբսիդիաները՝ Պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխանության հարցը:

- Ս.թ. մարտի 1-ին՝

իրականացրել եմ քննարկումներ Ճանապարհային քարտեզի նախագծի դրույթները՝ համաձայնեցնելով այն ռուսական կողմի հետ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը**

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովում՝

Հանդիպումների արդյունքում ստորագրվել է համապատասխան արձանագրություն, ինչպես նաև ձեռք են բերվել պայմանավորվածություններ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված 2018 թվականի պետական աջակցության ծրագրով նախատեսվող միջոցառումներում կատարել շտկումներ՝ արդյունաբերական հատուկ սուբսիդիաների տրամադրման նպատակայնության ճշգրտման տեսանկյունից:

- ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարությունում՝

Ընդանուր առմամբ ընդունվել է Ճանապարհային քարտեզի նախագիծը և պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ լրամշակել այն և մինչև ս.թ մարտի 31-ը ներկայացնել նախարարների քննարկմանը:

Միևնույն ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ աշխատանքային խմբի առաջին նիստն անցկացնել Երևանում՝ ս.թ. մարտի 29-31-ը նախատեսվող համաժողովի շրջանակներում:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Նախատեսվում է շտկումներ կատարել արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված պետական աջակցության 2018 թվականի գործողությունների ծրագրում՝ համապատասխանեցնելով տրամադրվելիք հատուկ սուբսիդիաները Պայմանագրով սահմանված չափանիշներին:

Նախատեսվում է մինչև ս.թ. մարտի 31-ը պատրաստել Ճանապարհային քարտեզի վերջնական տարբերակը:

Նշված առաջարկությունների իրականացման արդյունքում ակնկալվում է՝

- Հանրապետության ձեռնարկություններին արդյունաբերական հատուկ սուբսիդիաների տրամադրումը դարձնել համահունչ Պայմանագրով սահմանված պահանջներին:
- Սահմանված ժամկետում «Ճանապարհային քարտեզի» հաստատում:

10. **Գործուղվողը**

Արմեն Եգանյան

13.03.2018թ.